

ԱՆՀԱՍՆԵՐԻ ՌԵՏԻՆՈՊԱԹԻԱՅԻ ԵՎ ԱՆՀԱՍՆԵՐԻ ՀԵՏԻՆ ԱԳՐԵՍԻՎ ՌԵՏԻՆՈՊԱԹԻԱՅԻ ԷԹԻՈՊԱԹՈԳԵՆԵԶԸ ԵՎ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Լևոն Գրիգորյան

Ս.Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն, Երևան, Հայաստան

Կոնտակտային հեղինակ՝ levongrigo13@gmail.com

DOI: 10.54235/27382737-2025.v5.2-03

Ներկայացվեց/Received 10.04.25: Գրախոսվեց/Reviewed 23.10.25: Ընդունվեց/Accepted 23.10.25:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ներածություն. Անհասների ռետինոպաթիան (ԱՌ) ցանցաթաղանթի անոթային պրոլիֆերատիվ հիվանդություն է վաղաժամ ծնված նորածինների մոտ, որը մոտ 50,000 երեխայի կուրության պատճառն է ամբողջ աշխարհում:

Նպատակ. Գրականության սույն ակնարկի նպատակն է, հիմնվելով ուսումնասիրված հետազոտությունների տվյալների վերլուծության և ընդհանրացման վրա, ամփոփել ժամանակակից գրականության տվյալները ԱՌ-ի և անհասների հետին ագրեսիվ ռետինոպաթիայի (ԱՀԱՌ-ի) էթիոպաթոգենեզի և կլինիկական դրսևորումների վերաբերյալ:

Մեթոդներ. Ուսումնասիրվել են հետազոտության թեմային վերաբերող վերջին 10 տարվա ընթացքում հրատարակված շուրջ 80 աղբյուրներ, քննարկվել են ԱՌ-ի և ԱՀԱՌ-ի պատճառագիտությանը, ախտաձևագմանը, կլինիկական դրսևորումներին, ուղեկցող վիճակներին և նախատրամադրող գործոններին վերաբերող հիմնահարցերը:

Արդյունքներ. Լուսաբանվել է մի շարք գործոնների (հղիության ժամկետ, պտղի քաշը ծնվելիս, վարակի առկայություն, ճարպային փոխանակության խանգարումներ և այլն) կարևորությունը անհաս նորածինների ցանցաթաղանթի անգիոգենեզի խանգարումների զարգացման հարցում: Ուսումնասիրվել են ԱՌ-ի և ԱՀԱՌ-ի ձևավորման և զարգացման հավանականության վրա ազդող գործոնների բազմաթիվ տարաբնույթ, հաճախ նաև հակասական տվյալները և փոխազդեցությունը:

Եզրակացություն. Գրականության ակնարկը թելադրում է ԱՌ-ի և ԱՀԱՌ-ի զարգացման և հրահրող գործոնների, ինչպես նաև դրանց ազդեցության մեխանիզմների հետ կապի ուսումնասիրության անհրաժեշտությունը, ինչն անկասկած կնպաստի բուժման տարբերակված և ավելի արդյունավետ մոտեցումների մշակմանը:

***Հիմնաբառեր.** անհասների ռետինոպաթիա, անհասների հետին ագրեսիվ ռետինոպաթիա, ախտաձագում, ցանցաթաղանթի անգիոգենեզ*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մինչև հղիության 37-րդ շաբաթը տեղի ունեցած ծննդաբերությունն ընդունված է անվանել վաղաժամ, որը նորածինների հիվանդացության և մահացության գլխավոր պատճառն է, և, ընդ որում, ամենափոքր գեստացիոն տարիքով (ԳՏ) և քաշով նորածիններն առավել թիրախային են: Գրականության տվյալներով՝ ամեն տարի 15 միլիոն երեխա է ծնվում վաղաժամ ծննդաբերությունից [1]:

Վաղաժամ ծննդաբերության ամենահաճախակի հանդիպող բարդությունների շարքում ներառված են բրոնխաթոքային դիսպլազիան, գլխուղեղի սպիտակ նյութի տարածուն վնասումը, մեռուկացնող էնտերոկոլիտը, անհասների ռետինոպաթիան և սեպսիսը:

Անհասների ռետինոպաթիան (ԱՌ) վաղաժամ ծնված նորածինների մոտ առաջացող՝ ցանցաթաղանթի անոթային պրոլիֆերատիվ հիվանդություն է [2], որը մոտ 50,000 երեխայի կուրության պատճառն է ամբողջ աշխարհում [3]: Հայաստանում վերջին տասնամյակում իրականացված սրբինինգային ուսումնասիրությունների արդյունքների համաձայն՝ անհաս նորածինների ընտրանքում արձանագրվել է ինքնաբեր հետադարձ զարգացման չենթարկվող ԱՌ-ի և անհասների հետին ագրեսիվ ռետինոպաթիայի (ԱՀԱՌ) տարածվածության 9.5-10% ցուցանիշ:

Ելնելով ԱՌ-ի վաղ ախտորոշման կարևորությունից՝ հիվանդության վարման ուղեցուցյնները խորհուրդ են տալիս ԱՌ-ի սրբինինգ անցկացնել 30 շաբաթական ԳՏ-ում 1500 գ-ից ցածր քաշով կամ հետծննդյան բարդություններով նորածինների մոտ [4]:

ՆՊԱՏԱԿ

Գրականության սույն ակնարկի նպատակն է, հիմնվելով ուսումնասիրված հետազոտությունների տվյալների վերլուծության և ընդհանրացման վրա, ամփոփել ժամանակակից գրականության տվյալները ԱՌ-ի և ԱՀԱՌ-ի էթիոպաթոզների և կլինիկական դրսևորումների վերաբերյալ:

Էթիոպաթոզներ

Անհասների հետին ագրեսիվ ռետինոպաթիան (ԱՀԱՌ) ԱՌ-ի արագ խորացող ձևն է, որը բնութագրվում է հետին տեղակայմամբ, «պլուս» հիվանդության առկայությամբ և անբարենպաստ ելքով, քանզի նման ախտաբանությամբ հիվանդների մոտ ցանցաթաղանթի շերտազատման հավանականությունը հասնում է 45%-ի [5,6]:

Ըստ գրականության տվյալների՝ ԱՌ-ի զարգացմանը նպաստում են բազմաթիվ ռիսկային գործոններ, այդ թվում՝ անհասների մոտ թթվածնաբուժության երկարատև տևողությունը, հաճախակի հանդիպող թոքային ախտահարումները և ցածր նորածնային քաշը [4,7]:

Ըստ Բելսմիթի և համահեղ. (2020)՝ ծանր ԱՀԱՌ-ն ախտահարում է ավելի ցածր ԳՏ-ի վաղաժամ ծնված նորածիններին և ավելի արագ է խորանում ԱՌ-ի համեմատությամբ: Հեղինակները նաև նշում են, որ հիվանդության ծանրության աստիճանը չափելի է համապատասխան սանդղակով, որը փոխկապակցված է հիվանդության կլինիկական կատեգորիաների, ներառյալ ԱՀԱՌ-ի հետ: ԱՀԱՌ-ի քանակական բնութագրերի վերլուծությունը կարող է օգնել բարելավել ԱՌ-ի ագրեսիվ, տեսողությանը սպառնացող ձևերի ախտորոշմանը և բուժմանը [8]:

Անհաս նորածինները, ունենալով թերզարգացած հակաօքսիդանտային համակարգ, ծնվելուց հետո ենթարկվում են թթվածնի համեմատաբար բարձր կոնցենտրացիայի ազդեցությանը: Սա հանգեցնում է թթվածնի ռեակտիվ տեսակների չափից ավելի արտադրության՝ խթանելով օքսիդատիվ սթրեսի հետ կապված ազդանշանային ուղիները, ինչն էնդոթելային բջիջներում առաջացնում է ապոպտոզ: Արդյունքում ցանցաթաղանթի անոթները խցանվում են, և խաթարվում է ցանցաթաղանթի արյան անոթների բնականոն զարգացումը [9]:

Նեյրոններում, նեյրոֆագոցիտներում, մակրոֆագներում և էնդոթելային բջիջներում տեղակայված ազոտի օքսիդի սինթազ (NOS) իզոֆերմենտը գոյություն ունի երեք իզոֆորմերի տեսքով՝ նեյրոնային, ինդուկտիվ և էնդոթելային (eNOS): Գերթթվածնային պայմաններում eNOS-ի ազդեցության ներքո առաջացած ազոտի մոնօքսիդը (NO) մասնակցում է սուպերօքսիդային ռեակցիային՝ առաջացնելով պերօքսիմիտրիտ (ONOO), որը հիպե-

րօքսիայի հետևանքով առաջացած անոթային խցանման կարևոր գործոն է: Հիպօքսիան առաջացնում է NOS-ի ակտիվացում, ակտիվացնում է Յանուս կինազ/տրանսկրիպցիայի ազդանշանային փոխարկիչ և ակտիվատոր 3-ի (JAK/STAT3) ուղին՝ նպաստելով նեովասկուլյարիզացիային: Բացի դրանից՝ հիպօքսիան առաջացնում է անոթային էնդոթելային աճի գործոնի (VEGF) մակարդակի աճ, որն ակտիվացնում է eNOS-ը B-պրոտեինկինազային (Akt կամ PBK) ազդանշանային ուղու միջոցով [9]: eNOS-ի կողմից արտադրվող NO-ն խաթարում է անոթային էնդոթելային բջիջների միջև եղած կապը՝ հանգեցնելով անոթային թափանցելիության բարձրացման: Բացի դրանից՝ NO-ն ծառայում է որպես անոթալայնիչ միջոց և դրսևորում է հակաօկյուզիվ և պրոանգիոգեն հատկություններ: Նորմալ թթվածնային պայմաններում հիպօքսիա-մակաժելի գործոն-1α-ն (HIF-1α) հիդրօքսիլացվում է ցիտոպլազմում պրոլիլ հիդրօքսիլազայի (PHD) միջոցով: Եվ թթվածինը, և՛ երկաթը ծառայում են որպես PHD-ի էական կոֆակտորներ, իսկ հիպօքսիան արգելակում է PHD ֆերմենտի ակտիվությունը, ինչը մեծացնում է HIF-1α-ի կայունությունն ու մակարդակները՝ հետագայում խթանելով VEGF-ի արտադրությունը: Հակառակը, հիպերօքսիան արգելակում է HIF-1α-ն, ինչը հանգեցնում է VEGF-ի և անոթների խցանման նվազմանը: Ամփոփելով՝ ԱՌ-ի I փուլը կապված է ROS-ի և ONOO-ի բարձրացման և, մյուս կողմից, VEGF-ի և HIF-1α-ի նվազման, մինչդեռ II փուլը՝ eNOS-ի ակտիվացման և HIF-1α-ի ու VEGF-ի մակարդակների բարձրացման հետ [10]:

Ցանցաթաղանթի անոթները սովորաբար սկսում են զարգանալ հղիության 4-րդ ամսում: ԱՌ-ն ախտաֆիզիոլոգիորեն զարգանում է երկու փուլով [11]: Նախ՝ վաղաժամ նորածինները ենթարկվում են հիպերօքսիկ ազդեցության, ինչը հանգեցնում է ցանցաթաղանթում աճի գործոնների արտադրության կրճատմանը (օրինակ՝ VEGF), ինչն իր հերթին հետաձգում է անոթային հասունացման շրջանը: Երկրորդ՝ հասունացող ցանցաթաղանթի նյութափոխանակային ակտիվությունը գերազանցում է առկա անոթային մատակարարմամբ ապահովված օքսիգենացիան և առաջանում է ցանցաթաղանթի իշեմիա, ինչին հետևում է VEGF-ի բարձր արտադրությունը՝ առաջացնելով անոթալ նեոանգիոգենեզ [6,12]:

Ման և համահեղ. (2020) իրականացրել են ԱՌ-ի վերաբերյալ առկա տվյալների մետավերլուծության, որի մեջ ներառված բոլոր հետազոտություններից ստացված տվյալների որակն ու հավաստիությունը գնահատվել է Նյուքասլի-Օտտավայի սանդղակի միջոցով: Վերջինս ստուգաթերթ է՝ դեպքերի վերահսկման և կոհորտային ուսումնասիրությունների համար: Յուրաքանչյուր

ուսումնասիրությունն գնահատվել է հետևյալ 3 պարամետրերով. ընտրություն, համեմատելիություն և արդյունք: Մետափրոլուծության մեջ ներառվել են միայն 2 կամ ավելի ուսումնասիրությունների և համեմատական քանակական ուսումնասիրությունների ժամանակ միջին և ստանդարտ շեղում արձանագրած կենսամարկերները [13,14]:

Չորս ուսումնասիրություններում նյութափոխանակության պոտենցիալ կենսամարկերները հայտնաբերելու նպատակով օգտագործվել է զանազան մետաբոլիտների վերլուծությունը [15-18]: Մասնավորապես, ցանցաթաղանթի անոմալ անգիոգենեզը, նեովասկուլյարիզացիան և որոշ փոփոխված մետաբոլիտներ ծառայում են որպես կենսամարկեր ԱՌ-ի ախտորոշման համար: Դրանցից ցիտրուլինը և կրեատինինը ցույց են տվել վիճակագրորեն նշանակալի տարբերություն ԱՌ-ով և առանց ԱՌ-ի խմբերի միջև [15,19]: ԱՌ-ի խմբերում ցիտրուլինի վերկարգավորումը հաստատվում է իշեմիկ ռետինոպաթիաներին նվիրված նախորդ հետազոտություններով [15,16]: Յանգի և համահեղ. (2022) ուսումնասիրության կարևորագույն բացահայտումը որոշ կենսամարկերներով հիվանդության ախտորոշումն է մինչև ախտանիշների ի հայտ գալը [17]: Այնուհանդերձ, հեղինակների կողմից առաջարկվում են ավելի մեծաթիվ ընտրանքով երկայնական հետազոտություններ՝ փոփոխված մետաբոլիտների և ԱՌ-ի միջև պատճառահետևանքային կապը և, հետևաբար, դրանց նշանակությունը կլինիկական պրակտիկայում հաստատագրելու համար [20]:

Հեղուկային քրոմատոգրաֆիայի և սպեկտրոմետրիայի հետ կապված նյութափոխանակության ուսումնասիրությունները գրանցել են նաև այլ մետաբոլիտների՝ արգինինի, ամինոադիպիկ թթվի, պրուլինի և կրեատինինի քանակական փոփոխությունները: Ըստ հետազոտության տվյալների՝ ցիտրուլինի, արգինինի, ամինոադիպիկ թթվի կոնցենտրացիայի աճը, ինչպես նաև արյան շիճուկում կրեատինինի կոնցենտրացիայի նվազումը կապված են ԱՌ-ի հետ: Երկու ուսումնասիրություններ հայտնել են ԱՌ-ի այլ բիոմարկերների մասին: Ընդ որում, վերջիններս, ի դեմս գլիցինի, գլյուտամատի, լեյցինի, վալինի և հոմոցիստեինի կարևոր կենսամարկերներ են ոչ միայն ԱՌ-ի առաջացման կանխատեսման համար, այլ նաև ընթացքի ծանրության առումով [17,18]:

Յոթ հետազոտություններ ներառել են նշանակալի բացահայտումներ, համաձայն որոնց կենսամարկերների էական տարբերություններ ԱՌ ունեցող և չունեցող բուժառուների խմբերի միջև չեն արձանագրվել, մինչդեռ այլ 9 ուսումնասիրություններ ցույց են տվել, որ ԱՌ-ով բուժառուների խումբն ունի ինտելիկտալ աճի գործոն-1-ի (IGF-1) ավելի ցածր մակարդակ: Հավելենք, որ Այդոդա-

նը և համահեղ. (2022) գեկուցել են շիճուկի IGF-1 մակարդակների զգալի տարբերություններ ԱՌ-ով անհաս նորածինների մոտ՝ ԱՌ չունեցող նորածինների համեմատությամբ [21]: Համաձայն վերջին ուսումնասիրության՝ նորածինների մոտ IGF-1-ի կոնցենտրացիան հավանաբար արագ տատանվում է կյանքի առաջին մի քանի շաբաթների ընթացքում, և, հետևաբար, IGF 1-ի նմուշառումը նպատակահարմար է կատարել ըստ ստանդարտացված ժամանակացույցի՝ նորածինների հետծննդյան տարիքին համապատասխան:

Ինչպես նշվեց վերևում, VEGF-ն անգիոգենեզում ներգրավված կարևոր ազդանշանային սպիտակուց է, ընդ որում, Հելգրենի և համահեղ. (2021) համաձայն, VEGF-ի տարբեր կոնցենտրացիաները կախված են նորածնից VEGF-ի ստացման ժամկետից: Հեղինակների կարծիքով VEGF-ի կոնցենտրացիան ԱՌ-ի ախտածագական կարևոր տարբերակիչ ցուցանիշ է, որը թեև ծննդյան պահին կարող է մնալ նորմալի սահմաններում, սակայն ժամանակի ընթացքում գրանցում է հավաստի տատանումներ [22]:

Նմանապես, VEGFR-1 և VEGFR-2 ընկալիչները վերլուծվել են 6 ուսումնասիրություններում՝ օգտագործելով էնզիմ-կապակցված իմունոսորբենտային անալիզ (ELISA): ELISA-ն օգտագործում է հակածին-հակամարմին ռեակցիաները հատկորոշելու սկզբունքը՝ հատուկ ցիտոկիններ, սպիտակուցներ, պեպտիդներ և հետաքրքրություն ներկայացնող այլ բիոմարկերներ ընտրելու համար: ELISA-ն համեմատաբար ծախսարդյունավետ, անվտանգ և պարզ ընթացակարգ է, սակայն պահանջում է հմուտ մասնագետներ և ունի կեղծ արդյունքների մեծ հավանականություն [23]: Համաձայն այլ ուսումնասիրությունների՝ VEGFR-1-ը ԱՌ-ի դեպքում վիճակագրորեն նշանակալի կանխատեսող արժեք չի ներկայացնում [24]:

Թրոմբոցիտներ

Թրոմբոցիտների դերը ԱՌ-ի էթիոպաթոգենեզում դեռևս լիովին պարզաբանված չէ: Թրոմբոցիտներն ունեն նեովասկուլյարիզացիան, ֆիբրինի և մակարդուկի ձևավորումը կարգավորող ֆիզիոլոգիական հատկություններ [25,26]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ թրոմբոցիտները տեղայնորեն խթանում կամ արգելակում են անգիոգենեզը [26-28]: Դրանք պարունակում են հատիկներ՝ կազմված անգիոգենեզի կարգավորիչներից, մասնավորապես VEGF-ի և անգիոգենեզի արգելակիչներից, ավելի կոնկրետ՝ էնդոթելային արգելակիչներից [28]: Միևնույն ժամանակ ցույց է տրվել, որ թրոմբոցիտոպենիան ազդում է անհաս նորածինների ցանցաթաղանթի և համակարգային անգիոգենեզի կարգավորման վրա [22,25]:

Թրոմբոցիտոպենիայի և ԱՌ-ի միջև կապը փաստում է, որ թրոմբոցիտները պրոանգիոգեն ազդեցություն են թողնում ցանցաթաղանթի անոթների բնականոն զարգացման վրա [25]: Սրա կլինիկական կարևորությունը պայմանավորված է թրոմբոցիտների քանակի հսկողության նվազագույն ինվազիվությամբ, ինչը բժշկական անձնակազմին հնարավորություն է տալիս պատկերացում կազմել հնարավոր բարդությունների մասին [29]:

Որոշ ուսումնասիրություններ արձանագրել են թրոմբոցիտների նվազեցված քանակության կապը ԱՌ-ի հետ [30,31]: Ի հավելում, Չաքիրը և համահեղ. (2018) հայտնաբերել են, որ ավելի քան 30 շաբաթական ԳՏ-ում թրոմբոցիտոպենիան կապված է լինում բուժում պահանջող ԱՌ-ի հետ, մասնավորապես պարզելով, որ թրոմբոցիտների ցածր քանակը ԱՌ-ի նեովասկուլյարիզացիայի փուլում (II փուլ) հավաստիորեն կապված է ծանր ԱՌ-ի զարգացման հետ [25]:

Այսպիսով, թրոմբոցիտոպենիան կարող է մեծացնել ԱՌ-ի և դրա հետագա զարգացման վտանգը անհաս նորածինների մոտ: Պառոզանին և համահեղ. (2021) արձանագրել են, որ թրոմբոցիտները կարգավորում են VEGF-ի մակարդակը նեովասկուլյարիզացիայի ժամանակ [32]: Թրոմբոցիտների քանակի նվազումը հանգեցնում է VEGF-ի հեռացման նվազմանը, ինչն էլ հանգեցնում է VEGF-ի ավելացմանը և հետագա նեովասկուլյարիզացիային: Հետազոտությունների մի ստվար մաս [27,32] փոխկապակցվածություն է հաստատել թրոմբոցիտոպենիայի և ԱՌ-ի զարգացման կամ ծանրության միջև: Մինչդեռ այլ ուսումնասիրությունների արդյունքում [33] թրոմբոցիտների ցածր մակարդակների և ԱՌ-ի միջև փոխկապակցվածություն չի հայտնաբերվել: Խորեզյակը և համահեղ. (2019), ուսումնասիրելով թրոմբոցիտների մակարդակների տարբերությունը բուժում պահանջող և չպահանջող ԱՌ-ով երեխաների մոտ, թրոմբոցիտների ցածր մակարդակների և ԱՌ-ի միջև փոխկապակցվածություն չեն հայտնաբերել: Այնուհանդերձ, բուժման կարիք ունեցող երեխաների խմբում թրոմբոցիտոպենիայով (<150×109/լ) երեխաների թիվն ավելի մեծ է՝ թրոմբոցիտների նորմալ ցուցանիշներ ունեցող երեխաների համեմատությամբ: Դա կարող է պայմանավորված լինել նրանով, որ ուսումնասիրությունը չի բացառել թրոմբոցիտների փոխներարկման քանակի կամ թրոմբոցիտոպենիայի տևողության հետ կապված առանձնահատկությունները: Լիմը և համահեղ. (2021) ուսումնասիրել են թրոմբոցիտների միջին շաբաթական քանակը կյանքի առաջին 6 շաբաթներին: Համեմատական վերլուծության արդյունքում էական տարբերություն չի հայտնաբերվել ԱՌ-ով և առանց ԱՌ-ի խմբում վաղաժամ նորածինների թրոմբոցիտների քանակն արտահայտող

ցուցանիշների միջև: Թրոմբոցիտների քանակի նվազումը ոչ թե ուղղակիորեն կապված է ԱՌ-ի հետ, այլ ռիսկի այնպիսի գործոնների ազդեցության հետ, ինչպիսիք են սեպսիսը, արյան փոխներարկումը և բրոնխաթոքային դիսպլազիան [26]:

ԱՌ-ի ախտածագական զարգացումը պայմանավորող գործոնների բազմազանությունը, ինչպես նաև վիճակագրական մեթոդների տարբերությունը բացատրում են հետազոտությունների արդյունքների միջև եղած տարբերությունը: Վերջին տարիների թրոմբոցիտային պարամետրերի՝ ԱՌ-ի I և II փուլերի վրա ազդեցությանը միտված աշխատությունները թրոմբոցիտների ցուցանիշներում զգալի տարբերություններ չեն գրանցել [28]: Այնուամենայնիվ, թրոմբոցիտների մակարդակի աճը II փուլում հանգեցնում է նեովասկուլյարիզացիայի ակտիվացման, ինչը հակասում է Պառոզանինի և համահեղ. (2021) բացահայտումներին [32]:

Թրոմբոցիտների քանակի և ԱՌ-ի զարգացման հնարավոր կապը վերլուծվել է նաև այլ ուսումնասիրություններում, թեև լիովին հստակ չէ թրոմբոցիտոպենիայի կապվածությունը ԱՌ-ի հետ [22,25,29,33-35]:

Էրիթրոպոետին

Էրիթրոպոետինը երիկամի կողմից արտադրվող պեպտիդային հորմոն է, որը նպաստում է էրիթրոցիտների տարբերակմանը և հատունացմանը [19,36,37]: Ուսումնասիրությունները վերլուծել են էրիթրոպոետինի դերը բորբոքման համատեքստում, որը հաճախ ասոցացվում է VEGF-ի և IGF-1-ի մակարդակների հետ: Ըստ Ցիֆցոգլուի (2021)՝ ԱՌ-ով նորածինների մոտ էրիթրոպոետինի մակարդակները ցածր են լինում [36]:

Գլիկեմիա

Արյան մեջ գլյուկոզի բարձր ցուցանիշն առաջացնում է կենսաբանական փոփոխություններ ցանցաթաղանթում: Շանկարի և համահեղ. (2020) հետազոտության արդյունքում հայտնաբերվել է ուղիղ համեմատական կախվածություն արյան մեջ գլյուկոզի մակարդակի և ԱՌ-ի զարգացման ռիսկի միջև [38]: Մոհսենը և համահեղ. (2014) 65 երեխաների մոտ առաջահայաց հետազոտություն են անցկացրել՝ ուսումնասիրելու արյան գլյուկոզի և ԱՌ-ի միջև կապը և պարզել են, որ արյան գլյուկոզի առավելագույն և միջին կոնցենտրացիաները զգալիորեն ավելի բարձր են եղել ԱՌ-ով երեխաների, քան ԱՌ չունեցողների մոտ: Օգտագործելով լոգիստիկ ռեգրեսիոն վերլուծությունը՝ նրանք եզրակացրել են, որ կյանքի առաջին շաբաթվա ընթացքում գլյուկոզի միջին կոնցենտրացիայի աճը ռիսկի գործոն է զարգացող ԱՌ-ի համար, որը համապատասխանում է Վաննադիլի և համահեղ. (2020) բացահայտումներին [39,40]: Ըստ Չաքիրի և

համահեղ. (2020) հետազոտության՝ արյան գլյուկոզի բարձրացած մակարդակներն ազդում են ԱՌ-ի հետ ախտածագորեն կապված VEGF-ի և IGF-1-ի մակարդակների հետ և գործում են համահունչ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ IGF-1-ի ցածր մակարդակն արգելակում է ցանցաթաղանթի անոթների բնականոն զարգացումը՝ հանգեցնելով տեղային իշեմիայի և մեծ քանակությամբ VEGF-ի արտադրության, ինչն էլ իր հերթին հանգեցնում է ցանցաթաղանթի անոթների հիպերպրոլիֆերատիվ փոփոխությունների: Միևնույն ժամանակ ենթադրվում է, որ IGF-1-ը մեղմացնում է ինսուլինակայունությունը [41,42]:

Հակառակ Վաննադիլի և համահեղ. (2020) եզրակացությունների, Լեյի և համահեղ. (2021) մետալերլուծությունը բացահայտել է զգալի կապ հիպերգլիկեմիայի տևողության և ԱՌ-ի միջև շանսերի հարաբերակցության ճշգրտումից հետո առանց որևէ փոխկապակցվածություն արձանագրելու գլյուկոզի միջին մակարդակների և ԱՌ-ի հաճախականության միջև: Հետևաբար, վերոհիշյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՌ-ի ռիսկի գործոնները առավել կապված են հիպերգլիկեմիայի տևողության, քան գլյուկոզի ցուցանիշների հետ [40,43]:

Հետծննդյան վաղ շրջանի անհաս նորածինները չունեն գլյուկոզի կոնցենտրացիայի կարգավորման զարգացած համակարգ և, հետևաբար, ավելի զգայուն են շիճուկում գլյուկոզի կոնցենտրացիայի տատանումների նկատմամբ: Անհաս նորածինների մոտ ինսուլինի խեղաթյուրված արտադրությունը և ինսուլինակայունությունը հանգեցնում են գլյուկոզի հոմեոստազի ապակարգավորմանը [41]:

Խորեզյակի և համահեղ. (2019) հրապարակած գրականության ակնարկի մեջ ներառված ուսումնասիրությունների տվյալները ցույց են տալիս, որ հիպերգլիկեմիան կարող է համարվել ԱՌ-ի ռիսկի գործոն և հիվանդության ծանրության ցուցանիշ [33,44]: Արձանագրվել է, որ ԱՌ-ի հետ կապված է գլյուկոզի բարձր կոնցենտրացիաների ընդհանուր ազդեցությունը, այլ ոչ թե հիպերգլիկեմիայի առանձին դեպքերը: Հիպերգլիկեմիկ դրվագների քանակը և ծանրությունը նույնպես փոխկապակցված են ինչպես մեղմ, այնպես էլ ծանր աստիճանի ԱՌ-ի հաճախականության աճի հետ [44]:

Ենթադրվել է, որ այս կապը պայմանավորված է հենց գլյուկոզի՝ անոթների վրա ազդեցությամբ, կամ դրա հիմքում ընկած ինսուլինի ազդեցության նվազման հետևանքով IGF-1-ի մակարդակի նվազմամբ: Բացի դրանից՝ Լեյ Մյորի և համահեղ. (2020) աշխատության մեջ հստակեցրել են հիպերգլիկեմիայի ծանրության և տևողության շեմերը, որոնցից բարձր ցուցանիշների դեպքում ԱՌ-ի ռիսկը զգալիորեն աճել է, սակայն այս թեմայի վերաբերյալ հետազոտությունները սակավաթիվ են, և անհրա-

ժեշտ են լրացուցիչ ուսումնասիրություններ՝ պարզելու համար, թե գլյուկոզի ինչպիսի կոնցենտրացիաներն են հանգեցնում ԱՌ-ի զարգացման ռիսկի բարձրացմանը [44]:

Գլիկոլիզացված հեմոգլոբին

Ի լրումն, ուսումնասիրվել է գլիկոլիզացված հեմոգլոբինի (HbA1c) և ԱՌ-ի միջև կապը: Մովսասը և Մուրուսամին (2020) ցույց են տվել, որ HbA1c-ի ցածր մակարդակները կապված են ոչ պրոլիֆերատիվ, իսկ HbA1c-ի բարձր մակարդակները՝ պրոլիֆերատիվ ԱՌ-ի հետ: Այս հանգամանքը հավանաբար պայմանավորված է պտղի արյան գլյուկոզի ազդեցության և HbA1c-ի ներարգանդային մետաբոլիկ փոխակերպմամբ, ինչն իր հերթին թույլ է տալիս դիտարկել HbA1c-ի մակարդակը անհասների մոտ որպես ԱՌ-ի պոտենցիալ բիոմարկեր: Ըստ հեղինակների՝ անհրաժեշտ են լայնածավալ առաջադիմաց հետազոտություններ HbA1c-ի և ԱՌ-ի մակարդակների միջև փոխկապակցվածությունը հաստատելու համար [45]:

Արյան լիպիդներ

ԱՌ-ի վրա լիպիդային փոխանակության խանգարումների ազդեցության վերաբերյալ ուսումնասիրությունները սակավաթիվ են [46]:

Հետազոտվել է ադիպոնեկտինի (APN) և ԱՌ-ի զարգացման միջև կապը [46–49]: Ճարպաքիջներն արտադրում են ներծին կենսաակտիվ սպիտակուց՝ լիպոկալին, որը կարգավորում է լիպիդների և գլյուկոզի նյութափոխանակությունը՝ նպաստելով ճարպաթթուների օքսիդացմանը և արգելակելով լիպիդների սինթեզը՝ այդպիսով նվազեցնելով արյան մեջ տրիգլիցերիդների և խոլեստերինի մակարդակը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ԱՌ-ով անհաս նորածիններն ունեն APN-ի ավելի ցածր մակարդակ՝ համեմատած առողջ անհաս նորածինների հետ [46,47]:

Լիպոկալինը կարող է արգելակել նեոլասկուլյարիզացիան՝ կարգավորելով ուռուցքի մեռուկացման գործոն- α -ի (TNF- α), IGF-1-ի, երկարաշղթա բազմաչափ հագեցած օմեգա-3 ճարպաթթուների (ω -3 LCPUFAs) և VEGF-ի մակարդակները շիճուկում՝ դրանով իսկ արգելակելով ԱՌ-ի առաջացումը և զարգացումը: Ավելին, վաղաժամ ծնունդը հանգեցնում է այնպիսի գործոնների պտուղ-ընկերքային տրանսֆուզիայի նվազմանը, ինչպիսիք են IGF-1, ω -3 LCPUFA-ները և APN-ը: Սա հանգեցնում է անհաս նորածինների մոտ նյութափոխանակության խանգարումների, ինսուլինային համակարգի անհասության և ինսուլինակայունության: ԱՌ-ով երեխաների մոտ լիպիդների և լիպոկալինի մակարդակների ազդեցության վերաբերյալ ուսումնասիրությունները սակավաթիվ են, ինչն ընդգծում է լրացուցիչ հետազոտությունների անհրաժեշտությունը [46,47,49]:

Ապելին

Ապելինը անգիոզեն գործոն է, որը ապելին-Էյ-Փի-Ջեյ (apelin-APJ) համակարգի մի մասն է: Այն հանդիպում է անոթային էնդոթելային բջիջներում և իր դերն ունի ցանցաթաղանթի անգիոզենեզում: Այնուամենայնիվ, շիճուկում ապելինի մակարդակների և ԱՌ-ի միջև փոխկապակցվածության շուրջ հետազոտությունները հակասական արդյունքներ են տվել: Ճանը և համահեղ. (2022) ԱՌ-ով նորածինների պլազմայում ապելինի մակարդակի տարբերությունն չեն հայտնաբերել առանց ԱՌ-ի նորածինների համեմատությամբ [20]:

Ըստ Ֆենգի և համահեղ. (2023)՝ արդյունքների տարաբնույթության գործում կարող է որոշիչ լինել ընտրանքի բնութագրերի անհամապատասխանությունները, այդ թվում՝ ԳՏ-ն և նմուշի գնահատման ժամանակները [19]:

Այլ գործոններ

Կատարգինայի և համահեղ. (2018) ուսումնասիրությունը միտված է եղել ԱՌ-ի ժամանակ **դոֆամինի** և **նորէպինեֆրինի** կողմից անգիոզենեզի կարգավորման հետազոտմանը: Ցանցաթաղանթում դոֆամինի մակարդակի հարաբերական նվազումը և նորէպինեֆրինի հարաբերական աճը փորձարարական ԱՌ-ով առնետների ձագերի մոտ նեովասկուլյարիզացիայի գազաթնակետին հաստատում են նորէպինեֆրինի պրոնագիոզեն և դոֆամինի հակասագիոզեն հատկությունները ԱՌ-ի զարգացման II փուլում: Այդուհանդերձ, ԱՌ-ի ախտաբանական նեովասկուլյարիզացիայի մեջ դրանց մասնակցության մեխանիզմների պարզաբանումը պահանջում է հետագա հետազոտություններ [50]:

Առնետների թթվածնով մակածված ռետինոպաթիայի մոդելով կատարված հետազոտությունը ցույց է տվել, որ ենթացանցաթաղանթային լենտիվիրուսային գենային թերապիայի միջոցով Մյուլերի բջիջներում VEGF-ի էքսպրեսիայի նվազեցումը հանգեցնում է կորիզի արտաքին շերտի բարակման և VEGF-ի որոշ ձևերի արտազատման նվազման [51]: Այս տվյալները վկայում են, որ հակա-VEGF թերապիայի ճշգրիտ դոզավորումը կարող է պահպանել VEGF-ի նյարդապատշապան դերը՝ միաժամանակ կանխելով VEGF-ի ավելցուկային ակտիվությամբ պայմանավորված աննորմալ անգիոզենեզը: Բացի VEGF-ից, Մյուլերի բջիջների կողմից արտադրվում են այլ գործոններ, որոնք կապվում են ցանցաթաղանթի էնդոթելային բջիջների ընկալիչների հետ: Մասնավորապես, Մյուլերի բջիջներից ստացված Նորրին լիզանդը կապվում է էնդոթելային FZD4-ի հետ՝ ակտիվացնելով ազդանշանային ուղի, որն ազդում է ցանցաթաղանթի անոթավորման վրա [9]:

Ժամանակակից հակա-VEGF միջոցները չեն թիրախավորում ազդանշանային մեխանիզմները անոթալ բաժանվող էնդոթելի բջիջներում, այլ կապում են ապակենման մարմնի մեջ արտադրվող VEGF-ի բարձր կոնցենտրացիաները: Որոշ հակա-VEGF գործոններ արտահոսում են համակարգային շրջանառություն և կապվում շիճուկի կամ պլազմայի VEGF-ի հետ [52]: Բնացիզումաբի չափաբաժնի դեէսկալացիային նվիրված ուսումնասիրության հեղինակները հաղորդել են պլազմայում VEGF-ի մակարդակի իջեցման մասին այն նորածինների մոտ, որոնց կատարվել է բնացիզումաբի ներարկում ապակենման մարմնի մեջ, սակայն նշանակալի կապ չի հայտնաբերվել 2 կամ 4 շաբաթվա ընթացքում ընդունված չափաբաժնի և պլազմայի VEGF մակարդակների միջև [52]: Վերջիններս աճում են ԱՌ-ի՝ ԱՀԱՌ-ի զարգացմանը զուգընթաց [53]: Շարմայի և համահեղ. (2020) համաձայն՝ լազերային թերապիան նույնպես նվազեցնում է համակարգային VEGF մակարդակները, սակայն տվյալ նվազումը բնորոշվում է համեմատաբար ցածր լայնությամբ [54]: Այս բացահայտումները ցույց են տալիս, որ ծանր ԱՌ-ի և ԱՀԱՌ-ի դեպքում շրջանառվող VEGF-ի մի մասը կարող է արտազատվել աչքի կողմից: Ֆիդլերը և համահեղ. (2020), Շտալը և համահեղ. (2019) իրենց ուսումնասիրություններում չեն գրանցել պլազմայի VEGF-ի մակարդակի տարբերություն ռանիբիզումաբի ներարկումից 2 շաբաթ անց՝ լազերային թերապիայի համեմատ [55,56]: Տվյալ արդյունքը կարող է պայմանավորված լինել ռանիբիզումաբի կիսադուրսբերման ավելի կարճ պարբերությամբ՝ համեմատած այլ դեղամիջոցների հետ: Չնայած լազերային բուժման համեմատությամբ աֆլիբերցեպտի կիրառումը չի բավարարել սպասված արդյունքները, այնուամենայնիվ, այն այժմ ընդունված է ԱՄՆ Պարենի և դեղորայքի վարչության (ՊԴՎ կամ FDA) կողմից ԱՌ-ով նորածինների բուժման համար: Նորածինների կամ երեխաների մոտ թթվածնային սթրեսի պայմաններում ցանցաթաղանթի անգիոզենեզի վրա հակա-VEGF միջոցների ազդեցությունը գնահատելու համար անհրաժեշտ են լրացուցիչ ուսումնասիրություններ [57]:

Բորբոքային գործոններ

Բորբոքային գործոնների ուսումնասիրությունը հստակեցրել է ԱՌ-ի ախտածագումը և պատճառագիտությունը [58-61]:

Հղիության ընթացքում, ինչպես մայրական, այնպես էլ նորածնային օրգանիզմի համակարգային բորբոքումները մեծացնում են ԱՌ-ի վտանգը [62]: Բացի դրանից, մայրական օրգանիզմի բորբոքային արձագանքը նախաձննդյան շրջանում և անհաս երեխայի օրգանիզմի արձագանքը հետծննդյան շրջանում կապված է ԱՌ-ի զարգացման հետ: Նա-

խածննդյան բորբոքումը հիմնականում հյուսվածաբանորեն հաստատված խորիոամնիոնիտ է, իսկ նորածնի հետծննդյան բորբոքումը հիմնականում պայմանավորված է վաղաժամ ծննդաբերության հետ կապված սեպսիսով: Վերջինս տարածված բորբոքային վիճակ է պերինատալ շրջանում: Այն մայրական օրգանիզմի ռեակցիան է արգանդում գտնվող ամնիոտիկ մեմբրանի խորիոնային և ընկերքային թաղանթների վարակին, ընդ որում, բակտերիալ վարակը դիտվում է որպես խորիոամնիոնիտի առաջնային պատճառ [63]: Թե՛ մոր, թե՛ պտղի բորբոքային արձագանքը ծանր ԱՌ-ի զարգացման առաջնային ռիսկի գործոն է [62]:

Սեպսիսը համակարգային բորբոքային արձագանքման համախտանիշի տեսակ է, որն առաջանում է վարակային հարուցիչների (այդ թվում՝ բակտերիաներ, վիրուսներ և նախակենդանիներ) ներգործության հետևանքով: Վանգի և համահեղ. (2019) կողմից կատարված մետավերլուծությունը բացահայտել է էական կապ սեպսիսի և ԱՌ-ի զարգացման միջև [64]: Ընդ որում, նորածնային սեպսիսի վաղ սկիզբը կոռելյացվում է ծանր ԱՌ-ի հետ: Ի հավելումն, վաղաժամ նորածնային սեպսիսի դեպքերի մեծամասնությունը կապված է ներարգանդային վարակի հետ, ինչը ցույց է տալիս պոտենցիալ կապ մայրական օրգանիզմի համակարգային բորբոքման և նրանց երեխաների մոտ ԱՌ-ի բարձր ռիսկի միջև [65]: Մանկական սեպսիսը կապված է ԱՌ-ի, հատկապես, ծանր ԱՌ-ի, զարգացման հետ [64,65]: Վանգի և համահեղ. (2019) վերոնշյալ մետավերլուծության արդյունքում եզրակացրել են, որ սեպսիսը սերտորեն կապված է ԱՌ-ի ծանրության աստիճանի հետ հիվանդության ցանկացած փուլում, հատկապես ծանր ԱՌ-ի դեպքում (III-V փուլեր). ախտածին մանրէների և դրանց տոքսինների կողմից անոթային էնդոթելի վնասման հետևանքով բարձրանում է անոթների պատերին էնդոցիտների ադիզիայի և ցանցաթաղանթի մանր անոթների մեջ միկրոթրոմբոսի ձևավորման վտանգը: Վերջիններս խաթարում են արյան հոսքը և առաջացնում անոթային արտահոսք: Բացի դրանից, տվյալ կոնտիգենտի մոտ թերճնշման պատճառով մեծանում է շնչառական անբավարարության հավանականությունը: Արդյունքում հետսեպսիսային թերճնշումը և հիպօքսիան ազդում են ցանցաթաղանթի պերֆուզիայի վրա և խորացնում ցանցաթաղանթի իշեմիան [64]:

Նեյտրոֆիլների քանակը բորբոքման ամենաուղիղ ցուցանիշն է: Մի հետազոտություն ցույց է տվել, որ ԱՌ-ով վաղաժամ նորածիններն իրենց առաջին ամսում ունենում են նեյտրոֆիլների ավելի մեծ քանակ, քան առողջ վաղաժամ նորածինները: Նեյտրոֆիլ-լիմֆոցիտ հարաբերակցությունը և թրոմբոցիտ-լիմֆոցիտ հարաբերակցությունը պոտենցիալ բորբոքային մարկերներ են ԱՌ-ի ախ-

տորոշման և կանխատեսման համար [66,67]:

Համակարգային իմունաբորբոքային ցուցիչը (SII) համեմատաբար նոր ցուցանիշ է, որն ի սկզբանե օգտագործվել է որպես լյարդաբջջային կարցինոմայի կանխատեսման ցուցիչ: Սակայն, այն այժմ օգտագործվում է նաև բորբոքային հիվանդությունների ախտորոշման ժամանակ [68]: SII-ը հաշվարկվում է լիմֆոցիտների, նեյտրոֆիլների և թրոմբոցիտների քանակից, որոնք ներկայացնում են հոմեոստատիկ հավասարակշռությունը բորբոքային, իմունային և թրոմբոցիտ վիճակների միջև [69]: SII-ը հաշվարկվում է հետևյալ կերպ. թրոմբոցիտների քանակ \times նեյտրոֆիլների քանակ/լիմֆոցիտների քանակ [70]: Ակոզանը և համահեղ. (2021) առաջիններից էին, որ ներկայացրեցին SII-ը որպես ԱՌ-ի զարգացման կանխատեսման գործոն: Նրանք պարզել են, որ ԱՌ-ով վաղաժամ նորածիններն ունենում են զգալիորեն ավելի բարձր SII, քան վաղաժամ նորածիններն առանց ԱՌ-ի [66]: Էկինջիի և համահեղ. (2023) ուսումնասիրությունը արձանագրել է, որ C-ռեակտիվ սպիտակուց/ալբումին հարաբերակցությունը (CAR) կարող է ծառայել որպես ԱՌ-ի զարգացման մարկեր [71]: Կյանքի առաջին ամսվա ընթացքում CAR-ը զգալիորեն ավելի բարձր է լինում ԱՌ-ով վաղաժամ նորածինների մոտ, քան առանց ԱՌ-ի, և CAR-ը նույնպես զգալիորեն ավելի բարձր է եղել բուժվողների մոտ, քան չբուժվածների խմբում, ինչը ենթադրում է, որ կարող է լինել կապ հետծննդյան բորբոքային վիճակների և ԱՌ-ի ծանրության միջև:

